ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 45/8620հ

«18» 03 2012թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Ա. ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Երևանի քաղաքապետին ուղղված Ձեր 24.02.2012թ հ. 161-ի 8 հարցմանը՝ կապված Երևան քաղաքի ձյան մաքրման աշխատանքների համար նախատեսված և հատկացված գումարների չափի հետ, տեղեկացնում եմ, որ ձյան մաքրման աշխատանքները հանդիսանում են սանիտարական մաքրման աշխատանքների բաղկացուցիչ մաս: Հիմք ընդունելով «Աղբահանության և սանմաքրման մասին» ՀՀ օրենքը՝ 2012 թվականի Երևան քաղաքի բյուջեով նախատեսված է սանիտարական մաքրման աշխատանքներն աղբահանության ծառայությունների հետ միասին: 2011թ հունվար, փետրվար և դեկտեմբեր ամիսներին նախատեսվել և հատկացվել է 799.046.742.5 ՀՀ դրամ: 2012թ հունվար, փետրվար ամիսներին սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքների համար նախատեսվել և հատկացվել է 824.472.973.0 ՀՀ դրամ, որից սանիտարական մաքրումը կազմում է 523.223.679.0 ՀՀ դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՄՈՒՆԱԼ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ Ժ/Պ

Կ. ՂԱԶԱՐՅԱՆ

կատ. Լ. Մնացականյան
514-176